ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. դեկտեմբերի 3-ից 5-ը Լոնդոն կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

Հակոբ Վարդանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Քաղաք Լոնդոն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, 2018 թվականի դեկտեմբերի 3-ից 5-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ

5. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի օժանդակողների 8-րդ վեհաժողովին

6. **Քննարկված թեմաները՝**

2018թ. դեկտեմբերի 4-ին Լոնդոնում տեղի ունեցավ Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի օժանդակողների ութերորդ վեհաժողովը, որին մասնակցում էին ինչպես գործընկերության հիմնադրամին (այսուհետ՝ Հիմնադրամ) օժանդակող երկրների ներկայացուցիչները, այնպես էլ վերջինիս շահառու երկրների՝ մասնավորապես. Ուկրաինայի, Մոլդովայի, Բելառուսի, Վրաստանի ու Հայաստանի ներկայացուցիչները: Նիստի ընթացքում հաստատվեց Հիմնադրամի 2017թ. ֆինանսական հաշվետվությունը: Քննարկվեցին Ուկրաինայի, Մոլդովայի, Վրաստանի և Բելառուսի համար հասանելի ֆինանսական միջոցների հոսքերը, հաստատված ծրագրերի առաջընթացն ու նոր ծրագրերի հաստատումը:

Հայաստանի վերաբերյալ նստաշրջանի ընթացքում Հիմնադրամի կողմից ներկայացվեցին Հայաստանի համար խոստացված և վճարված միջոցների շարժը, ըստ որի ներկայումս Հայաստանի համար հասանելի է 2.321.396 եվրո և վճարման ենթակա են դեռ ԵՄ կողմից խոստացված 10մլն եվրո դրամական միջոցներից 5-ը և Հայաստանի կողմից վճարվելիք վերջին 250.000 եվրո գումարը, ինչը նախատեսված է 2019թ. պետական բյուջեով:

Ներկայացվեցին արդեն իսկ հաստատված Երևանի քաղաքային լուսավորության ծրագրի, Կոտայքի և Գեղարքունիքի կոշտ թափոնների կառավարման, Երևանի կոշտ թափոնների կառավարման և Երևանի էներգաարդյունավետության ծրագրերի առաջընթացները և իրականացման ժամանակացույցերը:

Վեհաժողովի ընթացքում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ներկայացվեց Գյումրու քաղաքային լուսավորության ծրագիրը, որի շրջանակներում նախատեսվող 2 մլն եվրո գումարի չափով դրամաշնորհը հաստատվեց օժանդակողների կողմից: Ծրագրի շրջանակներում Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից դեռևս 2016թ. տրամադրվել էին 14.6 մլն եվրո գումարի չափով վարկային միջոցներ, որոնք ուղղված են Գյումրիում հիմնականում ճանապարհային ենթակառուցվածքների զարգացմանն ու արդիականացմանը և արդեն իսկ իրականացվում են լայնածավալ շինարարական աշխատանքներ:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի կողմից ներկայացվեց նաև բազմաբնակարան շենքերի համար Հայաստանի կանաչ տնտեսության հնարավորությունների ծրագրի ֆինանսավորման նպատակով 3.6 եվրո դրամաշնորհի ստացման հարցը: Ծրագիրը ըստ էության միտված է ինովացիոն մեխանիզմով գործընկեր բանկերի միջոցով մասնավոր հատվածի ֆինանսավորմանը, որը զուգակցվելու է նաև ՎՋԵԲ վարկային միջոցներով և Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից տրամադրվելիք միջոցներով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2019թ. Հայաստանում նախատեսվում է անցկացնել Էներգաարդյունավետության բարձրաստիճան գագաթնաժողով, որտեղ քննարկվելու են ոլորտի զարգացմանն ուղղված հայեցակարգային մոտեցումները, որոշում կայացվեց վերոնշյալ ծրագիրը քննարկել գագաթաժողովի շրջանակներում և վերջինիս կողմից իրականացվելիք մոտեցումների համատեքստում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Վեհաժողովի ընթացքում ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ Հակոբ Վարդանյանի կողմից ներկայացվեցին Հիմնադրամի և ՀՀ կառավարության միջև իրականացվող հիմնական առաջնահերթությունները, հնարավոր համագործակցության զարգացման և խորացման ուղղությունները: Անդրադարձ կատարվեց ներկայումս պետության կողմից տարվող ֆիսկալ կոնսոլիդացիոն քաղաքականությանը, որը միտված է

պետական պարտքի կայունացմանը և նշվեց, որ այս պարագայում նոր սուվերեն վարկային միջոցների ներգրավումը հնարավոր է փոխարինել ոչ սուվերեն կամ մասնավոր վարկավորման մեխանիզմներով, և համայքները համապատասխան բարեփոխումների արդյունքում կարող են վարկունակ լինել և իրականացնել արդյունավետ ծրագրեր: Նշվեց նաև, որ ներկայումս օրենսդրական բարեփոխումներ են իրականացվում պետություն-մասնավոր համագործակցության գործիքի ներդրման ուղղությամբ և այս առումով էլ կարելի է հնարավոր համագործակցության եզրեր ստեղծել: Նիստի ընթացքում կարևորվեց նաև Հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագրերի ժամանակին և արդյունքամետ իրականացումը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Վեհաժողովի ընթացքում օժանդակողների կողմից հաստատվեց Գյումրու քաղաքային լուսավարության ծրագիրը:

Վեհաժողովի շրջանակներում Գերմանիան, որպես օժանդակող երկիր, 3 մլն եվրո գումարի չափով դրամաշնորհ հատկացրեց ՎԶԵՖ-ին՝ Հայաստանի համար իրականացվելիք ծրագրերի ֆինանսավորման նպատակով՝ այսպիսով Հայաստանի համար նախատեսված դրամաշնորհային միջոցները 20-ից ավելացնելով մինչև 23 մլն եվրո:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հիմնադրամի հետ աշխատանքների շրջանակներում առավել մեծ արդյունավետություն ապահովելու համար ներկա փուլում անհրաժեշտ է ջանքեր գործադրել և հետևողական լինել արդեն իսկ հաստատված ծրագրերի պատշաճ կերպով և ժամանակին իրականացման համար: Միևնույն ժամանակ հետագայում նոր ծրագրերի առաջադրման պարագայում, կարծում ենք, որ թերևս էներգաարդյունավետության ոլորտում իրականացվող ծրագրեր կարող են առավել հաջող արդյունքներ արձանագրել. ընդ որում վերջիններս կարող են իրականացվել ոչ սուվերեն վարկավորման մեխանիզմով՝ պետության համար չառաջացնելով պարտքային բեռ: Որպես հնարավոր ուղղություն կարելի է քննարկել նաև փոքր համայքներում կենտրոնացված ջեռուցման համակարգեր ներդնելու հնարավորությունը:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

07.12.2018թ